

Ընտանի առարկաներ փաստ էին ատոր:

Զուարթ, քիչ խօսող, ձիգ-բերան, մարդամօտ, Մանուկենց Ակուն:

Գեղէն հեռու, ժամով:

Քարայրին տպաւորութիւնը եղաւ խիստ զօրաւոր Մաթիկ Մելիքիանեանին վրայ: Հեղե՛ղ: Անոր լեզուն կրնար մրցիլ Զաղցի քարին:

Ամէնէն շատ գիտութիւնը, Գէորգեան Ճեմարանի հանքաբանութեան ու երկրաբանութեան դասերուն լրիւ վերլիչումովը, ուսուցիչին դիմախաղովն ու շէշտովը: Բոլոր խաւերը, քարի բեկորներէն ցոլացիկ միջանները, էսէջները, սելեֆոնները, ու խել մը աւելի բարբարոս անուններ: Դրութիւններ՝ բացատրելու համար ջուրերուն դերը կրային զանգուածներու վրայ: Ահաւոր իր մարգարէութիւնը, որով օրին մէկը անդնդախոյս կործանում կը պատգամէր մեծ լեռան, քանի որ անոր ընդերքը այսպէս «պեղուում, տրորուում» էին բնութեան մեծագոյն «ազդակներից»: Յետոյ տնտեսագիտական պրոպլէմներ: Յիմարութի՛ւնը թուրք վարչութեան, որ երեսի «էր թողել» իր երկրի անգին գեղեցկութիւնները: Իր գլխուն վկայութեամբը, յեղափոխական Մաթիկը կը խոստանար «մի քանի տարուց ուղիղ մի դրախտ անել» սա «գայլերի բնակարան» չրջանը: Երկաթուղիներ, լեռնային տեսակէն «էնպէս», ինչպէս «կառուցում էին Շվեյցարիայում»․ այսինքն՝ անգրքնայով, որոնք կարող էին վեր բարձրանալ, «թէկուզ» ձեռքին պէս ցից սարերէ: Ու ատոնց հետեւորդ զբօսաշրջիկները, որոնք փոխանակ ճանապարհ ու ժամանակ կորսնցնելու մինչեւ Զուիցերիաները, պիտի գային հոս, աւելի աժան ու վայելէին բնութեան հրաշալիքները: Յեղափոխական Մաթիկը կը մտածէր զարհուրելի արագութեամբ, առանց անդրադառնալու, որ զբօսաշրջիկներու արտածումը Արեւմուտքէն է եւ ոչ թէ Արեւելքէն, որ շատ-շատ ուխտաւորներ կու տայ մեր ժամանակներուն: Անշուշտ, անգամ մը, որ տալէրը ամբրիկեան գրպաններէ հոսէր, գեղին տնտեսութիւնը մէկ